ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32»

ք. Երևան «17» 05 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրա տարածքների բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իս Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նա պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանք կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերու նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կա սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնե Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքներ տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյա Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգ տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման

[illegible]ձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 6 886 000 (վեց միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը. ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

[illegible]նդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում տույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու

հաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ.
Կառավարական շենք N 2,	Կարմիրգյուղ
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ 095 000 867
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713	էլ. հասցեն՝ haferdqes@mail.ru
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000
գործառնական վարչությունում	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/ճ
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ս. Մ[illegible]յան	_____ Հ. Գասպարյան
(ստորագրություն)	
Կ.Տ	

Հավելված թիվ
« 17 » 05 2018 թ. կնքված
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ*

ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրանց տարածքների բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի							
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Կատարման	
						հասցեն	ժամկետը
1	71241200-1	դրամ	6886000	6886000	1	ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3, Կառավարական տուն 2	20 հոկտեմբեր 2018 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I.Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ Աղյուսակ N 1

II.Գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ Աղյուսակ N 2

III. Առդիր նյութեր և տվյալներ (թղթային և/կամ էլեկտրոնային)՝ Աղյուսակ N 3

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Նախատեսվող աշխատանքի անվանումը		Աշխատանքի հանձնառու նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
				Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
	1		2	3	4	5	6
1	Մատենագրական, արխիվային և գիտահետազոտական աղբյուրներից նյութերի հավաքում		ծանոթանալ նախկին ուսումնասիրությունների (այդ թվում՝ օգտվել ՀՀ մշակույթի նախարարության 2018 թ. պատվերով կատարվող պեղումների արդյունքներից) և նախագծային փաստաթղթերի հետ	աշխատանքային խումբ՝ պատմաբան (հնագետ), ճարտարապետ, ազգագրագետ	տեղագրական, պատմական, ճարտարապետական, ազգագրական (խնդիրների լուսաբանմանը նպաստող)	չի պահանջվում	Արդյունքները ներկայացնել 1 էլեկտրոնային և 1 թղթային տարբերակով
2	Վավերագրում /չափագրություն	ամբողջական՝ մետրային	շինության և հարակից հատվածների (կառուցվածքներ,	մասնագիտական խումբ՝ վերջին 10 (տասը) տարվա ընթացքում	Ընթեռնելի մասշտաբով, բոլոր հիմնական	կցել տեխնիկական	

		(հիմնական տվյալները՝ թվային) և ֆոտոգրաֆոմետրիկ	տարածք) չափագրություն, առկա խնդիրների (քայքայումներ, վնասներ) հստակ տեղադրում, դասակարգում և ներկայացում չափագրությունների վրա	նախագծման 5 (հինգ) տարվա փորձ կամ առնվազն 3 (երեք) հուշարձանի վերականգնման նմխագծի հեղինակ կամ համահեղինակ ճարտարապետի գլխավորությամբ	տարբերակումների և չափերի տեղադրմամբ (առնվազն 3 վրկ ճշտությամբ թվային գեոդեզիական տախոմետր սարքով)	վիճակի մասին ակտին	
3	Ինժեներական հետազոտությունն ը	երկրաբանական	ինժեներաերկրաբանական եզրակացություն տեղի գրունտների վերաբերյալ	երկրաբան	ըստ նորմատիվ պահանջների (համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով)	չի պահանջվում, կցել տեխնիկական վիճակի մասին ակտին	ներկայացնել 1 էլեկտրոնային և 2 թղթային տարբերակով
		նյութագիտական	եզրակացություն կառուցվածքում կիրառված նյութերի վերաբերյալ	նյութագետ, լաբորատոր ուսումնասիրություն			
4	Տեխնիկական վիճակի մասին ակտի կազմում /լրացում		Ուսումնասիրությունների համադրումը վիճակի (առկա խնդիրների) գնահատում՝ կցելով փաստագրական նյութերը	մասնագիտական խմբով (1-3 կետերով պահանջվող մասնագետների մասնակցությամբ)	համաձայն կից ձևաչափի (կարող է խմբի կողմից առաջարկվել դրույթների փոփոխում կամ լրացում)	համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ	

ԱՂՅՈՒՍԱԿ N 2՝ Գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Նախատեսվող աշխատանքի տեսակները		Աշխատանքի համառոտ նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
				Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
1	գիտանախագծային փաստաթղթերի կազմման 1-ին (էսքիզային) փուլ	Նախագծային առաջադրանքի կազմում	տեխնիկական վիճակի մասին ակտի տվյալների հիման վրա՝ նախատեսվող նախագծային պահանջների ամրագրում	Հեղինակ՝ հասկանալով եզրակացությունները և ամփոփել (քննարկել աշխատանքային խմբի հետ), օգտվել ուսումնասիրություններ կատարող (ՀՀ մշակույթի նախարարության 2018 թ. պատվերով կատարվող պեղումների արդյունքներ) մասնագետների տվյալներից	համաձայն կցված ԱԿՏ-ի ձևաչափի	սահմանված կարգով համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկման)	Աշխատանքը կատարելիս համագործակցել ուսումնասիրող խմբի հետ, ներկայացնել ալբոմ՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ և ցուցադրական նյութ
		Էսքիզային նախագիծ	հնարավոր տարբեր մեթոդների վերլուծությամբ, լուծումների ընտրություն,	հեղինակի գլխավորությամբ՝ մասնագիտական խումբ, հանգիր հետազոտությունների արդյունքների գրաֆիկական և վերլուծական մաս (հաշվետվություններ) և նախագծային խնդիրների լուծումների գիտական	ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ գծագրական մաս՝ համապատասխանող նկարներով, բացատրագիր և առկա խնդիրների նկարագրություն		

				հիմնավորումներ, առաջարկի կոնստրուկտորական հաշվարկ-հիմնավորում				
		իրականացման աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ	նախատեսել հիմնական ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների	հեղինակային խումբ, տեխնիկական խնդիրների լուծումներ	ըստ նորմատիվ պահանջների			
2	գիտանախագծային փաստաթղթերի կազմման 2-րդ (աշխատանքային գծագրերի մշակման) փուլ	ճարտարապետական մաս	աշխատանքային գծագրերի մշակում, ուղղանիգ հատակագծման և աշխատանքների կազմակերպման նախագիծ	Հեղինակ	ըստ նորմատիվ պահանջների՝ գլխավոր հատակագիծ, գծագրական մաս (ընթեռնելի մասշտաբով՝ այդ թվում՝ հանգույցներ), բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ), ժամանակացույց	սահմանված կարգով համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ	ներկայացնել ալբոմ՝ 4 օրինակ և էլեկտրոնային՝ 1 օրինակ
		Ինժեներական մաս		աշխատանքային խումբ				
		նախահաշվային մաս	ֆինանսական գնահատում << դրամով	կազմել Microsoft Excel ծրագրով				

Աշխատանքները կատարել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» **<< օրենքի** դրույթների և **<< կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական աշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» **կարգի պահանջներին համապատասխան:**

Մշակված նախագծային փաստաթղթերը պարտադիր են լրամշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների:

ԼՌՑՈՒՄԱԿ N3 ՝ Առդիր նյութեր և տվյալներ (թղթային և/կամ էլեկտրոնային)

/	Անվանումը	Էջերի քանակը	Մեկնաբանություն
1	Վկայագիր /паспорт/	9 թերթ	ծանոթանալ << ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում
2	Պահպանական գոտի	1 թերթ և նախագիծ	ծանոթանալ << ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում
1	Ցուցակ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդում առկա փաստավավերագրական նյութերի վերաբերյալ	1 թերթ	կցվում է
	Ակտի ձևանմուշ	2 թերթ	կցվում է

5	Առաջադրանքի ձևանմուշ	2 թերթ	կցվում է
6	Գլխավոր հատակագիծ, միջնաբերդի հատակագիծ և ճակատ /չափագրություն/	լուսանկար՝ 3 թերթ	կցվում է
7	Նախկինում կատարված նախագծեր, սուբնասիրությունների ընթացիկ և այլ տվյալներ	Նախագծային ալբոմներ, պեղման հաշվետվություն, գծագրեր, լուսանկարներ	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում /2018 թ. ընացքում կատարվող աշխատանքներ/

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
հեռ.՝ 095 000 867
էլ. հասցեն՝ haferdgas@mail.ru
ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/մ

Տնօրեն՝

Գասպարյան

"ՌԵԳՈՒԼ"
"РЕГУЛ"
"REGUL"

Հավելված թիվ 2
«13» 05 2018 թ. կնքված
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200-1	ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրանց տարածքների բարեկարգման գիտահետազոտական ու նախագծաշինարարական փաստաթղթերի մշակման աշխատանքներ	0	0	0	0	1377200	1377200	4820200	4820200	4820200	6886000	6886000	6886000	**6886000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

(ստորագրություն) Ս. Մուրադյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
հեռ.՝ 095 000 867
էլ. հասցեն՝ haferdoas@mail.ru
ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/ճ

Տնօրեն՝

(անուն) Հ. Գասպարյան

08417097
"ՌԵԳՈՒԼ"
"РЕГУЛ"
"REGUL"

Հավելված թիվ 3
« 17 » 05 2018 թ. կնքված
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
հեռ.՝ 095 000 867
էլ. հասցեն՝ haferdaas@mail.ru
ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/ճ

Պատվիրատու
ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրվագ գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 3.1
« 17 » 05 2018 թ. կնքված
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն